Հունվար-հունիս/January-June

ՏԵՂԵԿԱԳԻՐ
NEWSLETTER 2015

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՀԿԽԸ և ՏԿԱԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Փետրվարի 6-ին, Շիրակի մարզպետարանում հուշագիր ստորագրվեց ՀՀ Շիրակի մարզպետարանի, Հայկական Կարմիր խաչի ընկերության և ՏԿԱԻՆ աշխատակազմի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական ծառայության և ՀՀ Շիրակի մարզի Արեգնադեմ, Ազատան, Առափի, Նոր Կյանք, Անուշավան, Պեմզաշեն, Մեծ Մանթաշ, Սառնարողբյուր, Շիրակավան գյուղական համայքների միջև:

Հուշագրի համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզպետարանը պարտավորվում է Հայկական Կարմիր խաչի ընկերությանը և Համայնքային կամավորական արձագանքման թիմերին ընդգրկել արտակարգ իրավիճակների արձագանքման մարզային պլանում, որտեղ հստակ ընդգծված կլինեն Հայկական Կարմիր խաչի ընկերության և Համայնքային կամավորական արձագանքման թիմերի դերը և պատասխանատվության շրջանակները: ՀԿԽԸ-ն ընդգրկված կլինի նաև ՀՀ Շիրակի մարզային ԱԻ հանձնաժողովի և Աղետների ռիսկի նվազեցման ՀՀ Շիրակի մարզային թիմի կազմերում: Շիրակի մարզպետարանը կօժանդակի Հայկական Կարմիր խաչի ընկերությանը՝ նաև որպես ԱԻ ոլորտում մարդասիրական առաքելություն իրականացնող առաջատար դերակատարի, որն ունի տեղական և միջազգային համապատասխան արձագանքման կարողություններ՝ իր մարդասիրական առաքելության և աղետներին արձագանքման գործողություններում ներգրավված Հայկական Կարմիր խաչի ընկերության ուժերի աշխատանքների իրականացման հարցում և այլն:

ՀԿԽԸ նախագահ Մխիթար Մնացականյանը նշեց.

- «Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ Հարավային Կովկասում» ծրագիրն ու աղետների կանխարգելման այլ ծրագրերը, որ մենք իրագործում ենք Շիրակի մարզում շատ կարևոր են: Հենց այստեղ՝ այս մարզում, 1988-ի երկրաշարժից հետո մենք հասկացանք, որ պատրաստ չենք: Նման ծրագրերի

COOPERATION BETWEEN ARCS AND MTAES CONTINUES

On 6 February, at 12:00 PM in Shirak Regional Administration Building, a memorandum was signed between Shirak Regional Administration, Armenian Red Cross Society, MTAES Shirak Regional Rescue Service and Aregnadem, Azatan, Arapi, Nor Kyanq, Anushavan, Pemzashen, Mets Mantash, Sarnarghbyur, Shirakavan rural communities of Shirak region.

According to the Memorandum, Shirak regional administration is committed to include Armenian Red Cross Society and Community Volunteer Response Teams in the emergency response regional plan, where the roles and the scope of responsibilities of Armenian Red Cross Society and Community Volunteer Response Teams will be clearly described.

ARCS will be also involved in the Committee of Emergency Situations of Shirak region and Disaster Risk Reduction team of Shirak region. Shirak regional administration will support Armenian Red Cross Society also in the field of implementing emergency humanitarian mission as a leading player, which has the capacity of relevant response of local and international level and implements his humanitarian mission and disaster response operations.

Mkhitar Mnatsakanyan, ARCS President, mentioned:

“Building safer local communities in the South Caucasus” project and other Disaster management projects, that we implement in the Shirak region are very important. It is here, in this region, after the 1988 earthquake, we realized that we are not ready. The aim of such kind of projects is, to prepare each member of the community, to be able to cope with the disasters”.

Being already involved in the mentioned plans and commissions, ARCS will assist in the organizational and technical issues (First Aid, Psychosocial support, etc.) of trainings, drills and other events for Community Volunteer Response Teams, organized by Shirak Regional Rescue Service, MTAES.

նպատակն է, որ համայնքի յուրաքանչյուր անդամ պատրաստված լինի դիմակայելու աղետներին:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ արդեն ներգրավված լինելով նշված պլաններում ու հանձնաժողովում, կազմակերպչական և փորձագիտական հարցերով (առաջին օգնություն, սոցիալ-հոգեբանական աջակցություն և այլն) կաջակցի ՀՀ ՏԿԱԻ նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության կողմից համայնքային կամավորական արձագանքման թիմերի համար նախատեսված վերապատրաստման դասընթացներին, ուսումնավարժանքներին և այլ միջոցառումներին, կաջակցի ՀՀ ՏԿԱԻՆ աշխատակազմի ՓԾ Շիրակի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի վերանորոգմանն ու կօգտագործի դրա կարողությունները՝ նպատակային ծրագրեր և միջոցառումներ իրականացնելու համար, արտակարգ իրավիճակներում կօգտագործի Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման համաշխարհային ցանցի կարողությունների «Որոնում» ծառայության գործողություններն իրականացնելու նպատակով՝ տուժածների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, մշակման և տուժածների ընտանիքներին դրանց տրամադրելու միջոցով և այլն:

Հուշագրի ստեղծման համար նախադրյալներն ստեղծվեցին «Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ Հարավային Կովկասում» ծրագրի արդյունքում, որն իրականացվել է Եվրահանձնաժողովի մարդասիրական օգնության բաժնի, Դանիական և Իսլանդական Կարմիր խաչերի համաֆինանսավորմամբ և ԿԽ և ԿՄ ՄՖ օժանդակությամբ:

Ծրագրի շրջանակներում թիրախային Շիրակի մարզի թիրախային 18 համայնքներում ձևավորվեցին Համայնքային կամավորական թիմեր:

ԻՍԼԱՆԴԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐՆ ԱՅՑԵԼԵՑ ՀԿԽԸ

Ապրիլի 23-ին Հայկական Կարմիր խաչի ընկերության Գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը հանդիպեց Իսլանդական Կարմիր խաչի Գլխավոր քարտուղար Հերման Օտտոսսոնին և Աղետների ծառայության ծրագրերի ղեկավար Գուդյոն Սվանսոնին:

Այցի նպատակն էր ծանոթանալ Հայկական Կարմիր խաչի ընկերության գործունեությանը:

Գլխավոր քարտուղարը, ողջունելով հյուրերին, ներկայացրեց ՀԿԽԸ գործունեության ռազմավարական ուղղությունները, մարդասիրական ոլորտում աշխատելու դժվարությունները, այսօրվա մարտահրավերներն ու ծրագրվող քայլերը:

ԻԿԽ Գլխավոր քարտուղարն էլ իր հերթին ներկայացրեց Իսլանդական Կարմիր խաչի գործունեությունը: Այնուհետև զուգահեռներ անցկացվեցին երկու երկրների Ազգային ընկերությունների գործունեության դաշտի նմանությունների ու տարբերությունների և զարգացման հեռանկարների միջև:

ՀԿԽԸ Գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը շեշտեց, որ Իսլանդական Կարմիր խաչի հետ համագործակցությունը շատ արդյունավետ է եղել, և հույս հայտնեց, որ այն շարունակական կլինի:

2014թ. Իսլանդական Կարմիր խաչի ֆինանսավորմամբ և ԿԽՄՖ աջակցությամբ իրականացվել է «Թվային կամուրջ նախաձեռնություն» ծրագիրը, որի շրջանակներում համակարգչային տեխնիկա է ձեռք բերվել ՀԿԽԸ Գլխավոր գրասենյակի և մարզային/տարածքային մասնաճյուղերի համար: Մասնաճյուղերն ապահովվել են նաև ինտերնետային կապով, ստեղծվել է տվյալների առցանց բազա՝ կամավորների, շահառուների, դոնորների ու ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը համակարգելու համար:

Այցի շրջանակներում ՀԿԽԸ Աղետների կառավարման և բնակչության տեղաշարժի բաժնի վարիչ Էդմոն Ազարյանը՝ ԻԿԻ Գլխավոր քարտուղար Հերման Օտտոսսոնին և Աղետների ծառայության ծրագրերի ղեկավար Գուդյոն Սվանսոնին ուղեկցեց նաև Արարատի մարզի Լուսառատ համայնք, որտեղ ՀԿԽԸ աջակցությամբ վերականգնվել էր դպրոցի շենքը, ՀԿԽԸ Ստեփանավանի տարածքային մասնաճյուղ, ինչպես նաև Լոռու մարզի ՏԿԱԻՆ Ճգնաժամային կառավարման կենտրոն, որտեղ նրանց ներկայացրեց Աղետների կառավարման ուղղությամբ իրականացվող ծրագրերը:

ARCS will also assist in the renovation of the Crisis Management Center, Shirak Regional Rescue Service of MTAES and will use its capacity to implement targeted projects and events.

During emergency situations ARCS will use the capacity of the "Tracing" service of Red Cross and Red Crescent Movement Global Network, for the purpose of gathering information about the victims, and providing them to their families and so on.

Precondition for this Memorandum were the "Building safer local communities in the South Caucasus" project results, co-funded by European Commission Humanitarian Aid Department (ECHO), Danish and Icelandic Red Cross, in a consortium with the International Federation of Red Cross and Red Crescent Societies.

In the frame of the project in 18 target communities in the Shirak region Community Volunteer Teams were formed.

SECRETARY GENERAL OF ICELANDIC RED CROSS VISITED ARCS

On 23 April, Dr. Anna Yeghiazaryan, Secretary General of Armenian Red Cross Society met with Herman Ottosson, Secretary General of Icelandic Red Cross and Gudjon Svansson, Disaster Services Project Manager. The aim of the visit was to get acquainted with the activities of Armenian Red Cross Society. Greeting the guests, Secretary General presented strategic directions of ARCS activities, difficulties of acting in humanitarian sphere, todays' challenges and planned actions.

IRC Secretary General, in his turn, presented activities of Icelandic Red Cross. Afterwards, parallels between similarities and differences of the field of activities of two National Societies, as well as development perspectives, have been drawn.

ARCS Secretary General emphasized, that cooperation with Icelandic Red Cross has been quite productive and expressed hope that would be continuous.

In 2014, by the finance of Icelandic Red Cross and IFRC support "Digital Divide Initiative" project was implemented for ARCS Headquarters and Regional and Territorial Branches. ARCS Rb/Tbs were provided with internet connection, online database was created to coordinate the information on ARCS volunteers, beneficiaries, donors and projects.

In the frames of the visit, Edmon Azaryan, Head of ARCS Disaster Management and Population Movement Department, organized visits of Herman Ottosson, Secretary General of Icelandic Red Cross and Gudjon Svansson, Disaster Services Project Manager to Lusarat community of Ararat Region, where the school was renovated with the support of ARCS, ARCS Stepanavan Territorial Branch, as well as MTAES Crisis Management Center of Lori Region, where presented the projectes implemented by ARCS in Disaster Management Direction.

NEW MODEL OF SOCIAL CARE IN ARMENIA

On 20 May, delegation comprised of Armenian and Swiss Red Cross Societies representatives had a meeting with Jemma Baghdasaryan, Deputy Minister of RA Ministry of Labor and Social Affairs. Armenian Red Cross Society and the Ministry have been cooperating for many years,

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՆՈՐ ՄՈԴԵԼ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մայիսի 20-ին Հայկական և Շվեյցարական Կարմիր Խաչի ընկերությունների պատվիրակությունը հանդիպեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ջեմմա Բաղդասարյանի հետ: Հայկական Կարմիր խաչի ընկերությունը և նախարարությունը երկար տարիներ է, ինչ համագործակցում են՝ համատեղ գործունեություն իրականացնելով ուղղված սոցիալական պաշտպանության ոլորտի բարելավմանը:

Պատվիրակության անդամները ներկայացրեցին տարեցների հիմնահարցերի ոլորտում իրականացված հետազոտություններն ու ուսումնասիրությունները, ինչպես նաև տնային խնամքի կազմակերպման նոր մոդելն ու հետագա ծրագրերը: Հայկական կարմիր խաչ ընկերությունը՝ Շվեյցարական կարմիր խաչի օժանդակությամբ նախատեսում է Հայաստանում ներդնել տարեցների տնային խնամքի նոր մոդել: Փորձնական ծրագիրը նախատեսվում է իրականացնել Շիրակի և Լոռու մարզերում:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության և համագործակցության համար՝ Հայկական Կարմիր խաչի ընկերության Գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը նշեց.

-Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ հանդիսանալով օժանդակ կառույց կառավարությանը՝ մարդասիրական ոլորտում, երկար տարիներ գործունեություն է իրականացնում բազմաթիվ ոլորտներում, մոբիլիզացնելով մարդասիրության ներուժը, աջակցելու բնակչության խոցելի խմբերին: Մեր ռազմավարական ուղղություններից է սոցիալ-առողջապահական ուղղությունը, և այժմ Շվեյցարական Կարմիր խաչի աջակցությամբ մենք ծրագրում ենք ընդլայնել այս ուղղությամբ մեր գործունեությունը և սոցիալ-առողջապահական խնամքի նոր մոդել ներդնել համայնքներում: Պլանավորման այս փուլում կարևորում ենք պետական կառույցների ներգրավումը և շնորհակալ ենք համագործակցության համար:

Իր հերթին շնորհակալություն հայտնեց նաև տիկին Բաղդասարյանը՝ կատարված աշխատանքի, ակնկալվող աջակցության և օգտակար տեղեկատվության համար.

-Տարեցների հիմնահարցերը գտնվում են բարեփոխումների փուլում: Վերանայվում են մատուցվող ծառայությունների որակը, մշակվում են նոր չափորոշիչներ ու մոտեցումներ, ինչպես նաև կիրառվում է միջազգային փորձը: Համոզված եմ, որ հետագա համագործակցության ու համատեղ աշխատանքի արդյունքում տարեցների տնային խնամքի կազմակերպման գործընթացը կարձանագրի լուրջ հաջողություններ:

Շվեյցարական Կարմիր խաչի ներկայացուցիչ տիկին Ռուչմանն էլ հավաստեց, որ ներկայացված մոդելը կներդրվի մեր երկրի ավանդույթների և ձևավորված կենսակերպին համաձայն:

-Ծրագրի մեկնարկից առաջ լրացուցիչ ուսումնասիրություններ կկատարվեն՝ հիմնովին գնահատելով շահառուների կարիքներն ու մատուցվող ծառայությունների որակը: Ըստ անհրաժեշտության կվերապատրաստվեն բոլոր մասնագետները, կմշակվեն նոր չափանիշներ ու գործիքակազմ: Մենք պատրաստ ենք երկարաժամկետ ներդրումներ կատարել՝ շտկելու ոլորտում եղած բացթողումները, - իր խոսքում ընդգծեց տիկին Ռուչմանը:

Համայնքային տնային խնամքի, ադվոկացիայի և առողջապահության խթանում՝ մեծահասակների և կարիքավորների շրջանում ծրագիրն իրականացնելու նպատակով դեռ 2014 թվականի մայիսի 12-16-ը Հայկական Կարմիր խաչի ընկերություն էին այցելել Շվեցարական և Ավստրիական Կարմիր խաչերի ներկայացուցիչների պատվիրակությունը, որի կազմում էին ՇԿԽ ծրագրերի ղեկավար և առողջապահության հարցերով փորձագետ Քրիստինե Ռութչմանը, ՇԿԽ Սոցիալական սեկտորի և համայնքների զարգացման փորձագետ Ռաիսա Սինելնիկովան և ԱԿԽ Առողջապահական և սոցիալական ծառայությունների ղեկավար Մոնիկա Ուիլդը:

Այցի նպատակն էր ուսումնասիրել դաշտը և ծանոթանալ երկրի սոցիալ - առողջապահական իրավիճակին՝ տվյալ ոլորտում, Հայկական Կարմիր խաչի հետ համատեղ գործունեություն սկսելու նպատակով: Այցի շրջանակներում, փորձագետները հանդիպեցին դաշտում գործող տարբեր շահագրգիռ կողմերի հետ, այցելեցին Լոռի և Շիրակ: Դրան հաջորդեց ևս մեկ աշխատանքային այց:

Այդ երկու մարզերում էլ կիրագործվի «Համայնքային տնային խնամքի, ադվոկացիայի և առողջապահության խթանում՝ մեծահասակների և կարիքավորների շրջանում» ծրագիրը:

by implementing joint efforts aimed at improving the social protection sector.

The delegation members presented researches and studies conducted in the field of elderly issues, as well as the new model of home based care organization and future plans in this direction. Armenian Red Cross Society, with the support of Swiss Red Cross, is planning to introduce home based care for elderly in Armenia. The pilot program is intended to implement in Shirak and Lori regions.

Expressing gratitude for the warm welcome and cooperation, Dr. Anna Yeghiazaryan, Armenian Red Cross Society Secretary General said:

“Armenian Red Cross Society, as an auxiliary organization to the government in the humanitarian field, has been implementing wide activities in number of fields for many years, by mobilizing the power of humanity to support vulnerable groups. Social Support and Health Care is one of our strategic directions, and now with the support of Swiss Red Cross, we plan to expand our activities in this area and introduce a new model of social health care in the communities. At this stage of planning the involvement of state structures is very important for us and we are thankful for the cooperation”.

Mrs. Baghdasaryan, also thanked for the works done, expected support and useful information.

“The problems of the elderly are in the stage of improvement. The quality of provided serviced is being reviewed, new standards and approaches are being developed, as well as international practice is being applied. I am confident that as a result of future cooperation and joint work the process of organizing home care for the elderly will record a major success”, she said.

Mrs. Rutschmann, Swiss Red Cross representative, ensured that the presented model will be introduced in accordance with the lifestyle and traditions of our country.

“Additional studies will be carried out before the start of the project, thoroughly evaluating the needs of beneficiaries and the quality of provided services. All staff members will be trained as appropriate new standards and tools will be developed. We are ready to make long-term investments, correcting the deficiencies in the field”, said Mrs. Rutschmann.

2015 թվականին արդեն հանդիպումներ և քննարկումներ կազմակերպվեցին նշված երկու մարզերում ՀԿԽԸ մարզային մասնաճյուղերում և մարզպետարաններում: Նոր մոդելը կներդրվի 2016թ. հունվարից:

«ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԵՎ ՄԻԱՅՆԱԿ ՓԱԽՍՏԱԿԱՆ ԾԵՐԵՐԻՆ» ԾՐԱԳԻՐԸ ՎԵՐՍԿՍՎԵՑ

2015թ. փետրվարին վերսկսվեց Հայկական Կարմիր խաչի ընկերության «Սոցիալ-հոգեբանական աջակցություն երեխաներին և միայնակ փախստական ծերերին» ծրագիրը: Այն ուղղված է հանրակացարանաբնակ միայնակ փախստական ծերերի և երեխաների սոցիալական ներգրավվածությանը, հասարակության ինտեգրմանը և տնային պայմանների բարելավմանը:

Ծրագրում ընդգրկված են 7-14 տարեկան հանրակացարանաբնակ 80 երեխաներ, 120 միայնակ փախստական ծերեր՝ Երևանի թվով 3 հանրակացարաններից (Արցախի 4/10,10/1, Շիրակի 2Ա/7, Նոր Նորք՝ Մոլդովական 29/1) և քաղաք Աբովյանի 1 հանրակացարանից (Հատիսի 4-րդ նրբ.) և 34 կամավորներ:

Ծրագիրն ունի 2 ուղղություն՝ աջակցություն միայնակ փախստական ծերերին, որի շրջանակներում կամավորները շաբաթը մեկ անգամ այցելում են շահառու տատիկ-պապիկներին, օգնում են տնային գործերում, կազմակերպում սոցիալական և մշակութային միջոցառումներ: Ամիսը մեկ անգամ տատիկ-պապիկներին տրվում են սննդի փաթեթներ, երեք ամիսը մեկ անգամ՝ հիգիենիկ պարագաներ: Ձմռան ամիսներին ծրագիրը նախատեսում է նաև շահառուների կոմունալ ծախսերի (էլեկտրաէներգիայի) մասնակի փոխհատուցում:

Ծրագրի երկրորդ ուղղությունը հանրակացարանաբնակ երեխաների հետ աշխատանքն է, որի շրջանակներում ծրագրի կամավորները շաբաթվա ընթացքում բազմաբնույթ դասընթացներ են կազմակերպում հանրակացարանաբնակ երեխաների համար ՀԿԽԸ կողմից հիմնադրված «Ժպիտների ակումբ» դասասրահում, օգնում են երեխաներին իրականացնել տնային հանձնարարությունները, կազմակերպում այցելություններ մշակութային վայրեր, իրականացնում կինոդիտումներ և քննարկումներ՝ նրանց հետաքրքրող թեմաներով: Ամռան ամիսներին կազմակերպվում է ճամբար՝ հանրակացարաբնակ առավել կարիքավոր երեխաների համար:

Ներկայումս ծրագիրը ֆինանսավորվում է «Մեդիկոր» հիմնադրամի կողմից՝ Ավստրիական Կարմիր խաչի հետ համագործակցությամբ:

Ծրագրի իրականացման վերջին 5 տարիների ընթացքում կարճաժամկետ ընդհատումներ են եղել, սակայն կամավորները չնայած ֆինանսական միջոցների բացակայությանը, շարունակել են այցելությունները, որը կամավորական գործունեության նվիրվածության, մարդասիրական արժեքների դրսևորման, երիտասարդ և ավագ սերունդների միջև տարիների ընթացքում հաստատված սերտ բարեկամական կապերի վառ ապացույցն է:

ՄԵԿՆԱՐԿԵՑ «ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԽԹԱՆՈՒՄ» ԾՐԱԳԻՐԸ

Ապրիլի 9-ին, Հայկական Կարմիր խաչի ընկերության գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը, ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի ղեկավար Ֆիրդուս Զաքարյանը և Հայաստանում ԵՄ պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավար Հոա-Բինի Աջեմյանը հայտարարեցին «Սիրիահայերի ինտեգրման խթանում» ծրագրի մեկնարկը:

Հայկական Կարմիր խաչի ընկերության Գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանն իր բացման խոսքում նշեց, որ այսօր էլ աշխարհի տարբեր ծայրերում պատերազմներ և ճգնաժամեր են, և 21-րդ դարում մարդիկ դեռ տառապում են բռնությունից, սովից, հիվանդություններից:

-Պատերազմներից տառապող մարդկանց շարքում հայտնվեցին նաև Սիրիայի դեպքերի հետևանքով տեղահանված մեր հայրենակիցները, և Հայկական Կարմիր խաչի ընկերությունն աջակցել է նրանց ժամանման առաջին իսկ օրվանից,- ասաց նա:

Ինչ վերաբերում է իրականացվող նոր ծրագրին, ապա այն կնպաստի մեր հայրենակիցների ինքնաբավ և կայուն կյանքի ապահովմանը: ՀԿԽԸ Գլխավոր քարտուղարը հայտնեց, որ ամբողջ ծրագիրն իրականացվելու է պետական և ոչ պետական կառույցների հետ սերտ համագործակցությամբ:

For the implementation of the “Community Home based care, Advocacy and Health promotion among elderly and people in need” project yet on 12-16 May, 2014, Austrian and Swiss Red Cross representatives Delegation, Monika Wild, Head of Health/Social Services in Austria, ARC, Raisa Sinelnikova, Consultant SRC, Expert in Social Sector and Community Development, Christine Rutschmann, Programme Coordinator SRC, Health expert, visited Armenian Red Cross Society.

The aim of the visit was to explore the field and learn about the social and health situation in the sector and in collaboration with ARCS start an operation. The experts met with various stakeholders in the field, visited Lori and Shirak. This was followed by another business trip. In these two regions “Community Homecare, Advocacy and Health promotion, among elderly and people in need” project will be implemented.

In 2015, meetings and discussions were held with ARCS Regional Branches and Regional Administration of the mentioned 2 Regions. The new model will be introduced starting from January 2016.

"PSYCHO-SOCIAL SERVICE FOR ELDERLY AND CHILDREN REFUGEES LIVING IN DORMITORIES" PROJECT RE-LAUNCHED

The “Psycho-Social support to children and lonely refugee elderly” program restarted in February. The program aims at social integration and improvement of the living conditions of the lonely refugee elderly and children.

There are 80 children (aged 7-14), 120 lonely elderly people and 34 volunteers involved in the program. The program includes three dormitories (4/10, 10/1 Artsakh str., 2a/7 Shirak str., 29/1 Moldovakan str., Yerevan city and 1 Hatis str., Abovyan city).

The program has two main directions. The first direction is the psycho-social support to lonely refugee elderly. In the framework of this program volunteers visit the beneficiaries once a month, help them with housework, and organize social /cultural events. Once a month hygienic kits, and once every three months food parcels are distributed to the elderly people. The program also partially covers electricity costs.

The second direction of the program is the work with children living in dormitories. In the framework of this program volunteers organize various lesson sessions for children who live in dormitories. The Classes take place in rooms that have specially been allocated to the “Smiley Club” program of the ARCS. Volunteers help the children with their homework, organize visits to cultural places, watch films and have discussions on interesting topics. During summer a camp for children who are most in need is organized.

Currently the program is funded by «Medicor» foundation in cooperation with Austrian Red Cross.

Although the program had several financial gaps in the last 5 years, our volunteers never stopped their visits, which are proof of commitment, demonstration of humanitarian values and long-lasting tight connection between younger and old generations.

ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի ղեկավար Ֆիրդուս Զաքարյանը հիշեցրեց, որ արդեն երրորդ տարին է, որ մեր երկիրն առնչվում է սիրիահայերի խնդիրներին, և այդ աշխատանքները մշտապես կառավարության ու իրենց գերատեսչության ուշադրության ներքո են:

Հայաստանում ԵՄ պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավար Հոա-Բինի Աջեմյանը նշեց, որ ծանոթ է սիրիահայերի գործարար ունակություններին և վստահ է, որ դրանք զարգացնել է պետք.

- Հայաստանը պետք է օգտագործի նրանց կարողությունները: Նրանք ունեն կապեր, գիտելիքներ, արժեքներ, դա պետք է օգտագործվի որպես առավելություն: Այս ծրագիրը կօգնի պատերազմի պատճառով անօթևան մնացած սիրիահայերին հաստատվել հայրենիքում:

Այնուհետև ՀԿԽԸ Աղետների կառավարման և բնակչության տեղաշարժի բաժնի վարիչ Էդմոն Ազարյանը ներկայացրեց «Սիրիահայերի ինտեգրման խթանում» ծրագրի բաղադիչներն ու հիմնական նպատակները, շեշտելով.

- Մենք հատկապես կարևորում ենք գործարար սիրիահայերի ցանց և համատեղ ձեռնարկություններ ստեղծելու գաղափարը: Օրինակ, եթե ունենք քաղցրավենիք պատրաստողներ, նրանք հանդես են գալիս որպես անհատներ: Նրանց համախմբելով՝ արտադրություն հիմնենք: Մենք պետք է բոլորին միավորելու այդ շղթան, այդ խթանը հանդիսանանք: Որովհետև արտադրություն հիմնելու մեջ բազմաթիվ պարտականություններ և դերեր կան: Փորձելու ենք աջակցել, որպեսզի այդ դերերը, պատասխանատվությունները սահմանվեն, և որպես մի թիմ կարողանան աշխատել»:

Սիրիահայերի գործարարների միության անդամ, ոսկերչությամբ զբաղվող Միքայել Կարապետն ասաց, որ այս ծրագիրը դրական հույսեր է արթնացնում.

- Ամենակարևորը՝ ճանաչվելու և շուկայի կարիքն ունենք, որ մեր ապրանքներն արտադրվեն ու սպառվեն: Պատրաստ ենք համագործակցել և աշխատել այս ծրագրի շրջանակներում:

«Սիրիահայերի ինտեգրման խթանում» ծրագիրը 2015 թվականի մարտից մինչև 2017 թ. փետրվարը կիրագործվի Երևանում, Շիրակի, Լոռու, Կոտայքի, Արագածոտնի, Արարատի և Արմավիրի մարզերում: Ծրագիրը ֆինանսավորում են Եվրոպական միությունը և ավստրիական Կարմիր խաչը: Ծրագրի տնտեսական բաղադրիչը հնարավորություն կտա ներգրավել ներկայումս Հայաստանում բնակվող բոլոր սիրիահայերին, իսկ կրթական ուղղվածության գործողություններում կընդգրկվի ավելի քան հազար դպրոցական:

Ծրագրի տնտեսական բաղադրիչի շրջանակներում կիրականացվեն հետևյալ հիմնական գործողությունները՝ աշխատանքի շուկայի ուսումնասիրություն, սիրիահայերի մասնագիտական փորձի վերաբերյալ թվային տվյալների բազայի մշակում, շարունակական աշխատանքային խորհրդատվություն, մասնագիտական ուսուցում շահառուների համար, ինչպես նաև մեկնարկային ֆինանսական աջակցություն ՝ տնտեսական գործունեություն ծավալելու համար:

Երեխաների համար կրթական գործողությունները հիմնականում ուղղված են լինելու նրանց ինտեգրմանը՝ օտար լեզուների ուսուցման դասընթացների, դպրոցական գույքի ու պարագաների տրամադրման և հավասարը հավասարին մոտեցման միջոցով:

Սիրիական պատերազմի հետևանքով Հայաստանում ապաստանել են շուրջ 13 հազար սիրիահայեր:

«ՍԻՐԻԱՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՇՈՒՆՉԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՑՈՒՅՑԱՀԱՆԴԵՍ-ՏՈՆԱՎԱՃԱՌ

Հունիսի 25-ին, ժամը 12:00-ից 20:00-ը, Հայկական Կարմիր խաչի ընկերությունը «Աջակցություն սիրիահայերին և նրանց կարողությունների հզորացում» ծրագրի շրջանակներում ՀՀ Սփյուռքի նախարարության և Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոնի հետ համատեղ, Նալբանդյան և Հանրապետության փողոցների միջև ընկած նորաբաց պուրակում կազմակերպել էր «Սիրիահայ մշակույթի շունչը Երևանում» խորագրով բարեգործական ցուցահանդես-տոնավաճառ, որտեղ սիրիահայերը ցուցադրեցին իրենց արտադրանքը:

ՀԿԽԸ Գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը, լրագրողների հետ զրույցում նշեց.

- Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ), հանդիսանալով օժանդակ կառույց կառավարությանը՝ մարդասիրական ոլորտում և առաջնորդվելով իր առաքելությամբ, այն է՝ կանխարգելել և թեթևացնել մարդկային տառապանքները, չէր կարող անմասն մնալ Սիրիայի պատերազմի հետևանքով Հայաստան տեղափոխված սիրիահայերի հիմնախնդիրներին

PROMOTING INTEGRATION OF SYRIAN ARMENIANS (PISA) PROJECT STARTED

On 9 April, Anna Yeghiazaryan, Secretary General of Armenian Red Cross Society, Firdus Zakaryan, Head of Staff, RA Ministry of Diaspora and Hoa-Binh Adjemian - Head of Cooperation Section in the EU Delegation to Armenia announced the start of the "Promoting Integration of Syrian Armenians (PISA)" project.

Anna Yeghiazaryan, ARCS Secretary General mentioned in her opening speech, that wars and crises happen today around the World and in the 21st century people still continue to suffer from violence, hunger and diseases.

"Syrian Armenians are now among those, who suffer as a result of Syrian conflict. Armenian Red Cross Society has been supporting them from the first day of their arrival", she said. "The new project, that we starts today will contribute to the self-sufficient and sustainable livelihood of our beneficiaries".

ARCS Secretary General mentioned, that the project will be implemented in close cooperation with governmental and non-governmental organizations

Firdus Zakaryan, Head of Staff, RA Ministry of Diaspora reminded that it is the third year that our country faces the challenge of assisting Syrian refugees, and these issue is always in the circle of Government attention, particularly of the Ministry of Diaspora.

Hoa-Binh Adjemian - Head of Cooperation Section in the EU Delegation to Armenia, mentioned, that he is familiar with the Syrian Armenian business skills and is sure that they need to be developed.

"Armenia should use their abilities. They have networks, knowledge, values; it should be used as an advantage. This project will help homeless Syrian Armenians to reside in Historical Homeland", he said.

Edmon Azaryan, Head of ARCS Disaster Management and Population Movement presented the components and main objectives of "Promoting Integration of Syrian Armenians (PISA)" project, emphasizing:

"We particularly give importance to the idea of creating Syrian Armenian businessmen network and joint enterprises. For example, if you have candy makers, they make individual business, you can establish production by bringing them together. We need to be that chain; the stimulus to unite them. There are multiple roles and responsibilities in the production chain. We will try to support defining these roles and responsibilities, so they will be able to work as a team".

.Michael Garabed, Syrian Armenian Businessmen Union member, jeweler, said that this program gives hope.

"The most important for us is to become recognized in the market, that our products are produced and consumed. We are ready to cooperate and work in the frame of this project", he said.

"Promoting Integration of Syrian Armenians (PISA)" project will be implemented in Yerevan and Shirak, Lori, Kotayk, Aragatsotn, Ararat and Armavir regions, starting from March 2015 till February 2017. The project is financed by the European Union (contribution - 94.1 %) and the Austrian Red Cross (contribution - 5.9 %). All Syrian Armenian families currently residing in Armenia will be targeted by economic component of the project, as well as over 1000 schoolchildren will be involved in educational activities.

The following main activities will be implemented in the framework of the economic component of the project: database on professional

արձագանքելուց՝ աջակցելով նրանց ժամանման առաջին իսկ օրվանից:Հաշվի առնելով իրավիճակն ու աջակցության կարիք ունեցող սիրիահայերի մեծ թիվը, ՀԿԽԸ-ն ձեռնամուխ եղավ Հայաստան տեղափոխված սիրիահայերի կենսապայմանների բարելավմանն ուղղված ծրագրերի իրագործմանը: Այդ ծրագրերում մենք ներառել ենք եկամտաբեր գործունեության բաղադրիչը, որպեսզի մեր շահառուներն իրենց աշխատանքի շնորհիվ կարողանան ապահովել իրենց արժանապատիվ կենսակերպը:

Տոնավաճառի այցելուները հնարավորություն ունեցան գնելու քաղցրավենիք, ձեռագործ աշխատանքներ և ծանոթանալու տարբեր ոլորտների մասնագետների հետ. այս նախաձեռնությունն այցելուներին անհրաժեշտ տեղեկություն կտա սիրիահայերի հմտությունների վերաբերյալ՝ տեսանելի դարձնելով դրանք, իսկ վերջիններիս համար իրենց գործունեությունն ընդլայնելու խթան կհանդիսանա:

Միջոցառմանը ներկա էր նաև ՀՀ Սփյուռքի նախարարը Հրանուշ Հակոբյանը:

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է «ԿԼԻՄԱՅԻ ԱՐԼԵԼՅԱՆ ՀԱՐԹԱԿ» ԾՐԱԳՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ

Մարտի 31-ին, Հայկական Կարմիր խաչի ընկերության Գլխավոր գրասենյակում տեղի ունեցավ «Կլիմայի արևելյան հարթակ II» տարածաշրջանային ծրագրի մեկնարկային հանդիպումը: Հանդիպմանը ներկա էին Հայաստանում ԵՄ պատվիրակության Միջազգային օգնության/համագործակցության պատասխանատու Ջոն Բարկերը և ծրագրի առաջին փուլում ներգրավված հասարակական կազմակերպությունները:

ՀԿԽԸ Աղետների կառավարման և բնակչության տեղաշարժի բաժնի վարիչ Էդմոն Ազարյանը, ողջունելով ներկաներին ասաց,

-Մեզ համար շատ կարևոր է արձանագրել, որ ծրագրի առաջին փուլը կայացել է և մենք հասել ենք նշված արդյունքին, այսինքն Կլիմայի փոփոխության հարմարվողականության ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների ցանցը ստեղծվել է: Ծրագրի այս փուլում մենք աջակցելու ենք, որ այն զարգանա: Շատ ենք կարևորում անհատական պատասխանատվությունը, օգնելու ենք, որ ՀԿ-ներն այս ոլորտում ենթածրագրեր իրականացնեն:

Ծրագրի մեկնարկը ողջունեց նաև պարոն Ջոն Բարկերը.

- Մենք կարևորում ենք տարածաշրջանային այս ծրագիրը, քանի որ կարևորում ենք քաղաքացիական հասարակության կայացումն ու ՀԿ-ների նախաձեռնությունը: Կառավարությունները կարող են օրենքներ ընդունել, բայց միևնույն է մարդիկ են փոփոխություններ իրականացնում: Հայաստանում ԵՄ պատվիրակությունը ձեր կողքին է՝ օգնելու հաղթահարել դժվարություններն ու ձեր ձայնը լսելի դարձնելու:

Ուրախ եմ, որ ծրագրի երկրորդ փուլն է սկսվում, մեծ հետաքրքրությամբ հետևելու եմ ձեր գործունեությանը: Կցանկանայի նաև շնորհակալություն հայտնել Կարմիր խաչին՝ Հայկական Կարմիր խաչի ընկերությանը՝ արդյունավետ իրականացված աշխատանքի համար և Ավստրիական Կարմիր խաչին՝ աջակցության համար:

«Կլիմայի արևելյան հարթակ II» ծրագրի նպատակն է ընդլայնել Կլիմայի փոփոխությանը հարմարվողականության ոլորտում գործող առկա 6 ցանցերի և դրանց անդամ կազմակերպությունների կարողությունները՝ Արևելյան գործընկերության տարածաշրջանում

job background will be developed, follow up job coaching will be conducted, the beneficiaries will take part on vocational and language trainings and receive start-up funding for economic activities.

The educational activities for children will concentrate on integration, foreign language learning lessons, school equipment and stationery and peer to peer approach.

As a result of Syrian conflict, over 13 thousand Syrian Armenians have fled to Armenia.

FAIR-EXHIBITION TO SUPPORT INCOME-GENERATING ACTIVITIES OF SYRIAN ARMENIANS

On 25 June, from 12:00 to 20:00 PM, Armenian Red Cross Society in the frame of “Empowering Syrian-Armenians and their income generating activities” project in cooperation with RA Ministry of Diaspora and “Center for coordination of Syrian-Armenians’ issues” NGO organized “The breath of Syrian –Armenian culture in Yerevan” charity fair exhibition in the newly opened park between Nalbandyan and Hanrapetutyun streets, where Syrian-Armenians demonstrated their products.

Anna Yeghiazaryan, ARCS General Secretary in her speech with reporters mentioned .

- As an organization auxiliary to the government in humanitarian sphere and leaded by its Mission to prevent and reduce human sufferings, Armenian Red Cross Society could not remain indifferent to the problems of Syrian Armenians, forced to migrate to Armenia as a result of Civil War in Syria, and started to help them from the very first day of their arrival. Taking into consideration the situation and the rising number of refugees in need, ARCS initiated specific projects aimed at contributing to enhanced livelihood conditions of Syrian Armenians in Armenia. We included Income generation component in these projects to ensure our beneficiaries dignified life by their own efforts.

The Fair visitors had a chance to buy sweets, handicraft, as well as to get acquainted with various masters. This initiative will provide visitors with the necessary information regarding the skills of Syrian Armenians, ensuring the visibility of their work and experience. Due to the event, Syrian Armenians will get an opportunity to enlarge their small businesses.

The event was attended by RA Minister of Diaspora Hranush Hakobyan.

SECOND PHASE OF THE "CLIMATE FORUM EAST PROJECT" STARTED

On 31 March, 2015, in HQ of Armenian Red Cross Society, a kick off meeting of “Climate Forum East II” regional project took place. John Barker, International Aid/Cooperation Officer of the EU Delegation to Armenia and non-governmental organizations involved in the project’s first phase participated in the meeting.

Edmon Azaryan, Head of Disaster Management and Population Movement department welcomed the participants, mentioning

- It is important to note that the first phase of the project was

ազգային և տեղական մակարդակում՝ քաղաքականության ձևավորման գործընթացին, հանրային իրազեկման բարձրացմանն ու Կլիմայի փոփոխության ու բնապահպանության կառավարման ոլորտում կրթությանը նպաստելու նպատակով:

Այն իրականացվում է Արևելյան գործընկերության վեց երկրներում, տևելու է՝ 2015թ. հունվարից մինչև 2017թ. հուլիսը: Հայաստանում այն իրականացնում է Հայկական Կարմիր խաչի ընկերությունը: Ծրագիրը ֆինանսավորում է Եվրոպական Միությունը, լրացուցիչ ֆինանսավորումը տրամադրվել է Ավստրիական զարգացման գործակալության և Ավստրիական Կարմիր խաչի ընկերության կողմից:

ԾԱՌԱՏՈՒՆԿ՝ Ի ՀԻՇԱՏԱԿ ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾՆԵՐԻ

2015 թվականի գարնանը Արմավիրի և Արարատի մարզերում անհայտ կորած անձանց ընտանիքների նախաձեռնությամբ հիմնվեցին պուրակներ նվիրված Ղարաբաղյան հակամարտության հետևանքով անհայտ կորած անձանց հիշատակին: Նախաձեռնությունն իրականացվեց Հայկական Կարմիր խաչի ընկերության օգնությամբ՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի աջակցությամբ և քաղաքապետարանների հետ համագործակցությամբ՝ «Սատարում անհայտ կորած անձանց ընտանիքներին» ծրագրի շրջանակներում:

Արմավիրում, Վեդիում, Մասիսում՝ անհայտ կորած անձանց ընտանիքները ծառեր տնկեցին՝ ի հիշատակ անհայտ կորած իրենց հարազատների:

Գայանե Վարդանյանի ամուսինը Ատոմ Սարգսյանն անհայտ կորել է 1992 թվականի հունիսին:

- Մեզ համար կարևոր է, որպեսզի ինչ-որ տեղ նրա անունը լինի գրված: Կգանք այս պուրակ, կհանգստանանք, կհիշենք: Շնորհակալ ենք, որ աջակցում են մեզ, - ասում է նա:

Կարինե Զադերյանը 30 տարեկան է եղել, երբ, կորցնելով ամուսնուն՝ 4 անչափահաս երեխաների հետ մնացել է մենակ:

- Ծանր է մեր կորուստը, մեզ ոչ մի նյութական բան չի կարող սփոփել, - ասում է տիկին Զադերյանը, որ ծառատունկին մասնակցում է արդեն թոռնիկի հետ, - 23 տարի է անցել ու այսօր այս ծառերն են, որ կհիշեցնեն մեզ նրանց մասին: Քաղաքի կենտրոնում է պուրակը, եկեղեցու մոտ: Որ ծառերը մեծանան, թոռներիս կբերեմ ու կասեմ՝ տեսեք, ձեր պապիկի անունով ծառն է:

Սվետլանա Մելքոնյանն էլ նշեց, որ ծառատունկի օրը համընկել է իր ամուսնու՝ Ալբերտ Ամիրխանյանի ծննդյան օրվա հետ.

- Այսօր նա 67 տարեկան կդառնար: Բնություն շատ էր սիրում, ուրախ եմ, որ ծառատունկով ենք նշում նրա ծննդյան օրը: Դժվար է եղել առանց ամուսնու երկու երեխա մեծացնելը, ամեն տեսակի աշխատանք արել եմ: Թոռնիկիս հետ եմ այսօր եկել, պապիկի ծառն է ջրում:

Էմմա Կարապետյանը, որը նույնպես կորցրել է ամուսնուն, դիմեց մյուս ընտանիքներին.

- Մենք այստեղ հաճախ կգանք աղջիկներ, այնպես չէ՞, կգանք որ հիշենք մեր տղաներին: Մեզ մնում է միայն հպարտանալ նրանցով:

«Զոհված և կորած ազատամարտիկների» միության Արարատի տարածաշրջանի նախագահ Սեդա Դեմիրճյանը, ծառ տնկելով իր

successful and we achieved the result set, thus in the field of Climate change adaptation the network of acting NGOs is created. In this phase of the project we will contribute to its development. We emphasize individual responsibility and will help the NGOs to carry out sub-projects in this area.

Mr. John Barker also welcomed the launch of the program.

- “We give great importance to this regional project, as we highlight the fulfillment of civil society and NGO initiatives. Governments can pass laws, but the changes are carrying out by people, the EU delegation to Armenia is with you and is helping to overcome difficulties and to make your voice heard.

I am glad that the second phase of the project begins, and will follow to your activities with great interest. I would also like to thank Armenian Red Cross Society for the effective implemented work and the Austrian Red Cross for support”.

The objective of the “Climate Forum East II” project aims at increasing capacity of six existing national CSO Climate Change Adaptation (CCA) networks and individual CSO network members to contribute to national and local policy making process, public awareness rising, and education on Climate Change and environmental governance in the Eastern Partnership Region.

The Project is implemented in six Eastern Partnership countries. The implementation period of the Project is from 1st January 2015 till 30th June 2017. In Armenia the project is implemented by ARCS. It is financed by the European Union, and additional funding was provided by the Austrian Development Agency and the Austrian Red Cross.

TREE PLANTING IN MEMORY OF MISSING PEOPLE

In Spring 2015, in Armavir and Ararat Regions, by the initiative of Missing Persons families, small parks were established in memory of missing persons in Nagorno-Karabakh conflict. The initiative was implemented with the help of Armenian Red Cross Society, with the support of The International Committee of Red Cross in the frame of “Accompanying Families of Missing Persons” project.

In Armavir, Vedi and Masis, family members of missing persons planted trees in memory of their missing relatives.

Atom Sargsyan, the husband of Gayane Vardanyan is missing from June 1992.

“It is important to have his name written somewhere. We’ll come to this park, to have a rest here and remember. Thank you for supporting us”, she said.

Karine Zaderyane was 30 years old when she lost her husband and stayed alone with her 4 underage children.

“It’s hard for us, there is no any material thing that can console us”, Ms Zaderyan said, who came to the tree planting with her grandchild.

“23 years have passed and now these trees will remind us about them. The park is in the city center, near the church. When the trees grow up, I will bring my grandchildren here and say: Look, this tree is named after your grandfather”.

Svetlana Melkonian noted that the tree planting day coincided with her husband birthday, Albert Amirkhanyan.

“He would have turned 67 years old today. He was very fond of nature, I am happy that we celebrate his birthday with tree planting.

ամուսնու անունով, նշեց, որ այս ծառատունկը թեթևացրեց իրենց սրտերը.

- Մենք մեր հոգին և ուժը դրեցինք այս ծառատունկի մեջ, մենք միշտ կհիշենք մեր ամուսիններին և որդիներին:

Անհայտ կորածների ընտանիքների անդամները շնորհակալություն հայտնեցին իրենց գաղափարին աջակցություն ցույց տալու և իրականացնելու համար:

ԿԽՄԿ-ին են դիմել Ղարաբաղյան հակամարտության հետևանքով 4541 անհայտ կորած անձանց հարազատներ և բացել որոնման հայտեր, որոնցից 400-ը՝ Հայաստանում:

Տասնյակ տարիներ անց անհայտ կորածների ընտանիքներն (ԱԿԸ) ունեն տնտեսական, իրավական, հոգեբանական և սոցիալական կարիքներ:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի աջակցությամբ, 2011 թվականից մինչ այժմ իրականացնում է «Սատարում անհայտ կորածների ընտանիքներին» ծրագիրը, որն ուղղված է արձագանքելու անհայտ կորած անձանց ընտանիքների բազմաբնույթ կարիքներին: Այդ նպատակով անհայտ կորածների ընտանիքների համար կազմակերպվում են հանդիպումներ առողջապահական, սոցիալական, իրավական և այլ ոլորտների մասնագետների հետ, ինչպես նաև մշակութային միջոցառումներ և դասընթացներ: Հանդիպումներն ու միջոցառումները ՀՀ մարզերում իրականացվում են ՀԿԽԸ մարզային և տարածքային մասնաճյուղերի միջոցով:

ԻՐԱԶԵԿՄԱՆ ԱԿՑԻԱ՝ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Մարտի 24-ին, Հայկական Կարմիր խաչի ընկերությունն (ՀԿԽԸ) իրազեկման ակցիա անցկացրեց՝ նվիրված մարտի 24-ի Տուբերկուլյոզի դեմ պայքարի համաշխարհային օրվան:

Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի Շախմատի դպրոցին հարող պուրակում (Հանրապետության 1) տեղադրվել էր տաղավար, որտեղ ՀԿԽԸ աշխատակիցները և կամավորները հանրությանը բաժանեցին տուբերկուլյոզը լուսաբանող տպագիր նյութեր, պատասխանեցին նրանց հետաքրքրող հարցերին:

Այստեղ կարելի էր տեղեկանալ տուբերկուլյոզով վարակվելու ուղիների և բուժման կազմակերպման մասին, լուսանկարվել տուբերկուլյոզի դեմ պայքարի խորհրդանիշը հանդիսացող երիցուկի պատկերով հատուկ պաստառի մոտ՝ նշանավորելով յուրաքանչյուրի դերը՝ այս հիվանդության դեմ պայքարում:

Տուբերկուլյոզի դեմ պայքարի օրն ամբողջ աշխարհում համախմբում է մարդկանց ընդդեմ հիվանդության, որն ամեն տարի միլիոնավոր կյանքեր է խլում: Ամեն տարի աշխարհում գրանցվում է տուբերկուլյոզի մոտ 9 մլն նոր դեպք, մահանում է 1.6 միլիոնը:

Տուբերկուլյոզը առողջապահական լուրջ խնդիր է մնում նաև Հայաստանում: 2013թ. մեր երկրում տուբերկուլյոզով հիվանդացությունը 100 000 հաշվով կազմել է 36.6, բարձրացել է բարեհաջող բուժման ելքի ցուցանիշը՝ հասնելով 79.6 տոկոսի:

It was very difficult to raise two children without husband; I have done all kinds of work from engineer to sewing shop. I came with my grandchild today; he is watering his grandfather tree", she noted.

Emma Karapetyan, who also lost her husband, turned to the other families.

"We will often come here girls, to remember our loved ones. We must just be proud of them". Seda Demirchyan, Head of "Deceased and Missing Fighters Union", mentioned, planting a tree for her husband memory, that this action relieved pain of their hearts: "We put our soul and power in this action, we will always remember our husbands and suns", she said.

Relatives of Missing persons express their gratitude for supporting their idea and bringing it into life.

As a result of Karabakh conflict 4541 missing persons applications have been registered in ICRC, 400 applications have been registered in Armenia. After decades, the families of missing Persons (FMP) have some economic, legal, psychological and/or social needs.

Starting from 2011, Armenian Red Cross Society with the support of International Committee of Red Cross, has been implemented "Accompanying Families of Missing Persons" project, aimed at responding to the various needs of Families of Missing Persons. Meetings with the specialists from Health, Social, Legal spheres have been organized for the beneficiary families, as well as cultural events and trainings sessions. Those events in the RA regions are being implemented through ARCS Regional and Territorial Branches.

ARCS ORGANIZED AN AWARENESS CAMPAIGN ON WORLD TUBERCULOSIS DAY

On 24 March, Armenian Red Cross Society organized an awareness campaign dedicated to World Tuberculosis Day. In the park near to the Abovyan city Chess school, Kotayq Region informative pavilion was installed, where Armenian Red Cross Society employees and volunteers were distributing printed materials on Tuberculosis issues and were answering peoples' questions. On the site, passersby could get informed of the ways of infection and treatment of tuberculosis, also take a picture near the banner with the Chamomile image, as a symbol of the fight against TB, marking the role of each in the fight against the disease.

World Tuberculosis Day brings together people from all over the world against the disease, which takes away millions of lives every year. Every year, nearly 9 million new cases of tuberculosis are registered, of which 1.6 million die.

Tuberculosis remains a serious public health problem in Armenia. In 2013, tuberculosis morbidity was 36.6 per 100 000, successful treatment outcome index increased in our country, reaching 79.6 percent.

Հայկական Կարմիր խաչի ընկերություն
ՀՀ, Երևան, 0015, Պարոնյան 21/1
Հեռ.՝ +374 60 625050, ֆաքս՝ +374 60 62 50 72
www.redcross.am, էլ.փոստ՝ redcross@redcross.am
https://www.facebook.com/ ArmenianRedCrossSociety
https://twitter.com/RedCrossArmenia

Armenian Red Cross Society
21/1 Paronyan str., Yerevan, Armenia, 0015
Phone: +374 60 625050, fax: +374 60 62 50 72
www.redcross.am, e-mail: redcross@redcross.am
https://www.facebook.com/ ArmenianRedCrossSociety
https://twitter.com/RedCrossArmenia